

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ՝ ՆՐԱ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ

(1956 թ. հոկտեմբերի 7)

Ես ճառախոս չեմ, բայց ես էլ պիտի փորձեմ մի քանի խոսք ասել:

Ես ինձ շատ երջանիկ եմ զգում այս պահին, որ գտնվում եմ Սիմեոն կաթողիկոսի շինած այս հին դահլիճում: Այսօր այստեղ հավաքվել ենք կատարելու մեր շատ սիրելի Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ Վազգեն Ա-ի գահակալության տարեդարձը: Ես մոտիկից հետևում էի Վեհափառի կյանքին և գործունեությանը: Նա անկեղծ մարդ է Իր հավատի և հայրենասիրության մեջ: Նա մեր ժամանակի լավ մարդկանցից մեկն է:

Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը: Եթե նրա մաշկը քորես, Էջմիածին դուրս կգա: Հայ ժողովուրդը իր պետականությունը կորցնելով, հայ եկեղեցու մեջ գտավ իր ազգային զգացմունքների հանրագումարը: Միտքս է գալիս մեր սիրելի բանաստեղծ Վահան Թեքեյանը, որը հայկական եկեղեցին լավ է պատկերել իր «Եկեղեցին հայկական» բանաստեղծության մեջ: Էջմիածինը շանթարգել է եղած հայ ժողովրդի համար:

Եթե հայ ժողովուրդը հասել է մեր օրերը, այդ շնորհիվ Էջմիածնին է: Հայ ժողովուրդը երկու զորավիգ է ունեցել՝ մեկը Էջմիածինն է, մյուսը՝ ժողովրդական ազատագրական իդեալը:

Վեհափա՛ռ, ցանկանում եմ Ձեզ երջանկություն, առողջություն և երկար կյանք:

(«Էջմիածին» ամսագիր, 1956 թ., № ժ, էջ 30)